եւ Հոգեւորտէրն յամեալ ի ճանապարհ ի հանդիպեալ քաղաքսն, ոչ եկն այն տարի յԵրուսաղէմ, եւ զմեր տարեալ ընծայն բաշխեաց միաբանիցն վանից կարգաւորաց և աբեղայիցն ժամարարաց, նա և յամենայն աւուր, որ էր ի ժամանակս սրբակրօն և մաքրասուն առաջնորդին Երուսաղէմի՝ վարդապետին Աստուածատրոյ։ Եւ կատարեալ զուխտն՝ մահտեսի մարքս ելեալ եկաք ի քաղաքս։ Բայց ինքն այնու ոչ շատանալով, խոկալով զմահ թէ Երթայց և երկրպագից սուրբ գերեզմանի Կարապետի սրբոյ որ ի Տարօն, և գայ ընդ Լուսաւորչօք եւ ամենայն վանորէիւք յեկեղեաց գաւառն եւ ի Դարանաղեաց, ուռճկելով զամենեսեան։ Հանդիպի և ի բնիկ գիւղի իւրում և անդ ևս յիշատակ թողեալ ինչ ի պէտս գիւղին և գայր։ Եւ յետոյ եկեալ կաթողիկոսն սուրբ յԵրուսաղէմէ ի քաղաքս՝ բազում սէրս ցուցանէր որ անգծելի։ Եւ փոխանակ ոչ առնելոյն զուխտն Երուսաղէմի ընդ Հոգեւորտիրին, խնդրեաց Աստուածաշունչ մի վասն իւր. որ եւ անդանդաղ առնէր, և պարսաւելի նօտարք քաղաքիս և ծաղկողքն մինչև զերիս և զԴ ամս անցուցանէին անկատար, ուստի գայր թուղթ յէջմիածնէ թէ Զանասցես, ո՛վ հաւատարիմդ եւ ի բնէ բարեկա՛մդ, ո՛վ քրիստոսասէրդ և սիւնդ հաստատ սուրբ Տանս, ջանա՛ զի առաքեսցես զյիշատակս քո, զի մարմնաւոր աչօք տեսայց մինչչև մեռեալ իցեմ։ Որում եհաս վախճան ամենամաքուր սուրբ հայրապետին Փիլիպոսի՝ աթոռակալին Սուրբ Էջմիածնի, որ և մորմոքէր սիրտ իւր, խարշէր երիկամունքն և գալարէր աղիքն՝ թէ ոչ ժամանեաց, այլ մնաց սակս աղմկացն աւուրցն առաջնոց այսր պատմելոց մինչև ցարդ։ Որում և գրեաց Յակոբ կաթողիկոսն թէ Առաքեա՛։ Եւ զկնի մեռանելոյն՝ առ մեզ գիր մխիթարական հանդերձ աւրհնութեամբ վասն Աստուածաշընչին յղելոյ։ Զոր ի ժամ